



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մայիսի 2018 թվականի N 745

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔ
ԵՎ ԵՐԹ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ Մարինա Խաչատրյանի կողմից ներկայացված իրազեկումը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ղազարյանի 2018 թվականի մայիսի 15-ի թիվ 57/4-1847 գրությունը՝ հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ դրական կարծիքով, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 20-22-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից 2018 թվականի հունիսի 05-ից մինչև հունիսի 12-ը՝ ժամը 11:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ